ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

МИНИСТР ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

MINISTER OF DEFENCE OF
THE REPUBLIC OF ARMENIA

«29» 03 2016 թ.
ԴԿ/510-481

ՀՀ արտաքին գործերի նախարար
**Է.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն նախարար

«Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 21-րդ հոդվածների համաձայն և ի պատասխան ՀՀ արտաքին գործերի նախարարության՝ 09.03.2016թ. թիվ 1111/02095 գրության, Ձեզ եմ ուղարկում «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերի շահերից բխող երկրատարածական տեղեկատվության փոխանակման ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրի նախագծի հայերեն թարգմանությունը և փաստաթղթի կնքման նպատակահարմարության մասին ՀՀ պաշտպանության նախարարության տեղեկանքը:

Խնդրում եմ Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը՝ Համաձայնագրի կնքման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերն ապահովելու վերաբերյալ:

Առդիր՝ 1. Համաձայնագրի նախագծի հայերեն տեքստը՝ 6 թերթ:
2. ՀՀ ՊՆ տեղեկանքը՝ 1 թերթ:

Հարգանքով՝

Ս.ՕՀԱՆՅԱՆ

02880

30 03 16

Կատ.՝ Գ.Մարտիրոսյան
Հեռ.՝ 29 45 29

ք.Երևան, 0044, Բագրևանդի 5, Հեռ.(+374 10) 29-44-01, Ֆաքս (+374 10) 29-43-12
г. Ереван, 0044, Багреванда 5, Тел.: (+374 10) 29-44-01, Факс: (+374 10) 29-43-12
Yerevan city, 0044, Bagrevand 5, Phone: (+374 10) 29-44-01, Fax: (+374 10) 29-43-12

# ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ
**«Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերի շահերից բխող երկրատարածական տեղեկատվության փոխանակման ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրի կնքման նպատակահարմարության մասին**

«ԱՊՀ մասնակից պետությունների զինված ուժերի շահերից բխող երկրատարածական տեղեկատվության փոխանակման ոլորտում համագործակցության մասին» դիտարկվող համաձայնագրի նախագիծը մշակվել է Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի գլխավոր շտաբի ռազմատեղագրական վարչության կողմից:

Համաձայնագրի նախագծի մշակման և ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ի շահ ԱՊՀ մասնակից պետությունների զինված ուժերի երկրատարածական տեղեկատվության փոխանակման ուղղությամբ ջանքերը միավորելու և միասնական տեղեկատվական տարածություն զարգացնելու անհրաժեշտությամբ:

Համաձայնագրի կնքումը թույլ կտա լուծելու ԱՊՀ մասնակից պետությունների զինված ուժերի տեղագրաերկրաբաշխական և նավարկային ապահովման ուղղությամբ առաջացող դժվարությունները՝ զորքերի (ուժերի) ամենօրյա գործողության և համատեղ միջոցառումների նախապատրաստման ու անցկացման ընթացքում:

Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունը հնարավորություն կընձեռի ՀՀ զինված ուժերի ռազմատեղագրական ծառայությանը ժամանակին և պատշաճ մակարդակով իրականացնել օպերատիվ և մարտական միջոցառումների տեղագրաերկրաբաշխական և նավարկային ապահովումը, ԱՊՀ մասնակից պետությունների զինված ուժերի ռազմատեղագրական ծառայությունների հետ երկրատարածական տեղեկատվության փոխանակումը ոչ միայն համատեղ միջոցառումների անմիջական իրականացման ընթացքում, այլ նաև դրանց նախապատրաստման փուլերում:

Համաձայնագրի նախագծին հավանություն է տրվել 2014թ. նոյեմբերի 14-ին Մոսկվայում կայացած ԱՊՀ մասնակից պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի հերթական նիստի ընթացքում և որոշում է կայացվել այն սահմանված կարգով ներկայացնել ԱՊՀ մասնակից պետությունների կառավարությունների ղեկավարների խորհրդի քննարկմանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը նպատակահարմար է համարում սկսել «ԱՊՀ մասնակից պետությունների զինված ուժերի շահերից բխող երկրատարածական տեղեկատվության փոխանակման ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրի նախագծի հետագա համաձայնեցման և կնքման հետ կապված ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան ընթացակարգերը:

ՀՀ պաշտպանության նախարար

Ս.ՕՀԱՆՅԱՆ